



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



13052-13056







835

18 May

1. - Wm has your Yards Wash-pins
2. - Laundry map
3. - Thyfayre Loom
4. - Wm's phonograph
5. - Wm's washpins W. - ph  
Linen

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՄԻՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

---

ԱՏԵՆԱԿՈՍՈՒԹԻՒՆ

ԽՈՐԵՆԱՏ ԱՐՔԵՊԻԿՈՎՈՒՄ ԵԱՐ-ՊԵՏ

Ի ՀԱՆԴԵՍ ԲԱՅՄԱՆ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ԿԱՀԱՈՒՆ

---

Ի 23 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1877

---

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ ԼՐՈԳՐՈՅ

— 1877 —

13499



1471-2003

# ԱՏԵՆԱԻՕՍՈՒԹԻՒՆ

ԽՈՐԵՆԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆԱՐ ՊԵՏ

Ի ՀԱՆԴԻՍ ԲՈՅՄԱՆ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԿԱՃԱՌԻՆ

23 ՀՈԿԹԵՄԲԵՐ 1877

Տես' բք .

Մինչդեռ Ոգին պատերազմաց հուր և սուր ՚ի ձեռին արհաւիրք և մահ կը սփռէ մեր չորս դին, մինչդեռ թնդանօթից երկրադղորդ թնդիւնը և հրացանաց շանդալից բոմբիւնը որոտընդուատ կը գոռացնեն զԵւրոպ՝ և զԱսիա, մինչդեռ ազգաց բաղդեր յահ ՚ի դոզ կան յերերի, և դիւանազէտք ՚ի տագնապ չփոթի կը ժողովին, կը խօսին, կը վիճին անիմանալի, սուր և զրիչ իրարու հետ կը մրցին, կոգորին յարիւնուուշա ասպարիզի . . . կը ժողովինք և մեք այսօր, Տեսրք, բայց ո՛քչափ տարբեր մեծութեամբ, ի՞նչ հակընդդէմ նպատակաւ :

Զմեզ ևս Ոգի մի կը հրաւիրէ հոս, բայց սիրոյ Ոգին է այն որ ՚ի հեծուկս մարտագոռ որոտմանց որով կը սասանի աշխարհ, խաղաղութեան և հաշտութեան հեղիկ մրմունջներ կը ներչնչէ մեր սրտին . ինքն ևս դրօշ մի ունի ՚ի ձեռին, բայց ոչ արիւնաներկ ահաւոր, այլ արշալուսոյն փողփողի ՚ի նմա երանգ ձիւնաթոյր : Տեսէք, այն խաչապակ դրօշուն վրայ կը շողողայ մի ասապազիր վերտառութիւն . « Մինիթիւն » : Կը լսէք, յապարէդ կարդայ նա զմեզ, բայց ոչ Արիսեան արիւնուուշտ պա-

աերազմաց է այն ասպարէղ, այլ հաշտափայլ մրցմանց սիրոց, հանճարոյ և մտապարար աշխատութեան :

Այո՛, Տեա՛րք, ոչ եթէ ՚ի դահլիճ դիւանագիտական, և կամ թէ ՚ի խորչս և ՚ի ծերպս ծածկախորհուրդ ժողովակաց, այլ պարզադէմ՝ լուսոյ առջև, Հայութեան լուսաւորութեանց վերանորոգող մեծի Հօրն խաղաղաւէտ և սրբազան հովանեաց ներքեւ կը ժողովիմք այսօր, վե՛հ նապատակաւ միով ՚ի սրտի : Ոչ եթէ զքաղաքս և զանդաստանս ակաղձունս քրտամբք հէտ մը չակին աւարել և աւերել, այլ զթումբս հակառակութեան և թշնամութեան . մրցիլ՝ ոչ ազգ բնդ ազգի, այլ ազգաւէր խորհրդոց, դիտաւորութեանց և նախապաշարմանց դէմ . գրաւել վերջապէս ո՛չ գաւառս և աշխարհս, այլ զսիրտս և զմիսս և զոգիս, այսինքն է՝ զներիկայն և զապագամյն :

Ներեցէք ուրեմն, Տեարք, որ փոքր ՚ի շատէ բացատրեմ մեր նապատակը, և առ այն հասանելոյ միջոցները՝ ջանամ սպարզաբանել, որպէս զի այսօրեայ հանդիսիս գեղեցիկ խորհուրդն իմաստասիրուի, և այժմէն իսկ ճշդեալ և որոշ գաղափարաւ ձեռնամուխ լինիմք ՚ի գործն արյիւնաւէտ յոր հրաւիրէ զմեզ Ողին Հայրենեաց :

## Ա.

Տեա՛րք, Հայոց ազգը իւր բազմադէտ թշուառութեանը մէջ բաղկ մի ունի, անլըռելի՛ բաղդ, այս է՝ քաղաքական աշխարհի փոթորկայոյզ ափունքներէն արտասահման գտնուիլը : Ազատ ՚ի մտատանջ հոգոց և ՚ի սպառիչ ծախուց՝ զոր քաղաքագիտութիւնը կը ծնանի, սպառնադէտ երկաթակուռ նաւատորմեր պատրաստելոյ, մարդախանձ և մահացան վիթխարի զէնքեր դարբնելոյ, ահաւոր բերդեր և ամբարտակներ կառուցանելոյ, բիւրագունդ զօրաց ամրոխներ հանդերձելոյ, և երկրին ձուխութիւնն ու կորոմի և մտացի երիտասարդութիւնը զոհ տալոց կեղակարծ նպատակներու, — Հայոց ազգը, կըսեմ, ազատ յայտմամենայնէ, իւր ներքին ճոխութիւնը մնացուն և մարդաշահ նպատակներու կը ծառայեցնէ, և իւր աղնիւ երիտասարդութիւնը՝ իրենց հանճարոյն մշակմանը, յօդուտ անձանց և

այն ազգին՝ որոյ բազգ ունին որդիքն լինելոյ : Խաղաղութեան այս Օազիզին մէջ գտնուող ազգ մի՝ —որ անուրջն է լրջամիտ փիլիսոփայից — , պարտական է որ համապատշաճ մեծամեծ արդիւնքներ արտադրէ :

Աւասիկ հինգ դաշնէ ՚ի վեր սոյն հանգամանաց մէջ կը գըտնուի մեր ազգը : Խրականացոյց այն արդիւնքները՝ զորս իւր սոյն բացառիկ զիրքը պարտք կը դնէր իւր վրայ : Պէտք է խոստովանիմք Տեա՛րք , թէ գրեթէ ոչ : Եւ ընդէ՞ր . վասն զի Յափական դանդաղութիւնը ծանրացած իւր վրայ , չգիտաց մասնակցիւ լուսաւոր աշխարհին հսկայաքայլ շարժմանը , և առ ՚ի չգոյէ արտաքին թշնամեցաց՝ ներքին թշնամիններ դրյացոյց , և նոցա վերայ դարձոյց իւր պատերազմական խանդը : Այսու ազգայօդ միութիւնը խանգարած՝ խանգարեցաւ և իւր ներդաշնակութիւնը , կազացաւ յառաջադիմութիւնը , և նուռազեցաւ՝ եթէ չկորեաւ բոլորին՝ իւր նշանակութիւնը : Միութեան քայլքայումը՝ ջատեաց զնա հետզհետէ , և ինքզինքն անզօր գտաւ Եւրոպական յառաջդիմութեան հետամտելոյ , ճիշդ այն պահուն՝ յորում զիտութիւնք , արուեստք և ճարտարութիւնք միութեան և ընկերութեան անհրաժեշտ հարկը կ'ապացուցանին անտարակուսելի կերպով :

Հանճար , զիտութիւն , հմտութիւն , արուեստ , ճարտարութիւն ո՞վ չզիտեր թէ մեր մէջը չեն պակսիր : Բազմաթիւ են ահա մեր դպրոցք , ուսումնարանք ու վանքեր , և աննշան չէ այն գումարը որ նոցա համար տարուէ տարի կը վատնուի , աւազ , գրեթէ ամուլ կերպով յայլ և այլ թաղս և ՚ի քաղաքու : Սակայն մասնական ջանքեր , անհատական զօրութիւններ են որ կը գործեն . անհատական զօրութեան արդիւնքը՝ ոչինչ է հաւաքական զօրութեան արտադրածին առջև : Եւ ահա հաւաքական զօրութիւնն է որ կը պակսի մեր մէջ : Մեր ակարութեան և վայրավատին վիճակին դադանիքն անոր մէջ է , Տեա՛րք :

Թողումք որ զիտութեանց և արուեստից մէջ խիստ տկար մնացած եմք այս պատճառաւ , զիտել կազաչեմ թէ ո՞րչափ եամնացած եմք նոյն իսկ մեր ազգային ճանաշողութեան մէջ :

Զգիտեմ թէ ներելի՞ է այս լուսաւորութեան դարուս մէջ , չոգւոյ և ելեքտրականութեան դարուն մէջ , կըսեմ , և մասնաւանդ՝ քրիստոնեայ և քաղաքակերթ Եւրոպայի մէջ՝ ապրիլ իրը

թէ հինգ դար նախապէս ծնած լինէինք , և ունենալ դիտու թիւն և արուեստ՝ որ նահապետական դարուց զմեզ ժամանակակից կարծեցնեն : Բայց այս ինչ անուրանալի է՝ որ աններելի է ազգի միոյ ապրիլ այսպիսի դարու մի մէջ՝ որ դար է ազգայնութեանց , միութեան և յառաջադիմութեան , և ապրիլ այսքան ցան և ցիր դրիւք , այսքան տարտամ կենօք , և այսքան աննպատակ :

Ներեցէք որ մեր նախնի խորհողաց միոյն հետ գոչեմ . «Մեռայ կեան+ անկեա՞ն+ են » :

Հաւատաքննութեան դժողին և դժոխային խորհուրդը՝ Հայոց ազգը չերկնեց : Բայց երբ այն դժոխային խարոյիներն ամօթահար և անիծապարտ մարեցան , դեռ Հայ սրտերու մէջ պէ՞տք է արծարծին :

Հայը չէր որ Գալիլէոսի պէս հանճարներ հալածեց , և յիմարաբար զաշխարհ բռնի կեցնել մտարերեց Արարչապետին տուած անդիմազրելի չարժմանը դէմ : Բայց Հայը պէ՞տք է անշարժութեան օրինակ հանդիսանայ , երբ ամենայն ինչ իր շուրջը կը չարժի , դէպ ՚ի նպատակ մի կը դիմէ , կը հաւաքի , կը զօրանայ , և մասնկական հաւաքումներէն ահաւոր զօրութիւններ կը գոյացնէ :

Ոնչարժութիւնը՝ անկենդանութիւնն է . լոյսը տեսնել և խաւարի մէջ ապրիլը՝ եթէ մեռելութիւն չէ , ի՞նչ է ուրեմն :

Այսպիսի ազգ մի կարող ի՞նչ իցէ ազգաց ժողովին մէջ նըշանակութիւն մի ունենալ , Տեա՞ք :

Գրեթէ ամենքդ ալ Եւրոպիոյ մէջ , լուսաւորութեան բոլոյն մէջ ամբարած էք իմաստութեան և դիտութեանց ճառագայթները : Երբ ամեն մէկերնիդ հոն՝ վարժարանաց դրասեղաններու վերայ ձեր երիտասարդ ճականաներն հակած գիշերները կը հսկէիք յուսումն մակացութեանց , և կը վայլէիք յաղթանակաւ ձեր նախանձորդ Եւրոպացի դասակցացը մէջ , ո՞չ ապաքէն արտամութեամբ սրտի կը տեսնէիք որ ձեր տազանդն յարդող Եւրոպա անփոյթ էք և անզէտ այն ազգին որոյ ծնունդ էք և պատիւ :

Բայց ինչո՞ւ սրտմոխմք աշխարհի դէմ որ Հայ ազգը չճանաչէր . միթէ նոյն իսկ սո՞յն ազգը լաւագոյն կը ճանաչէ ինքս :

զինքը , իւր լեզուն , իւր պատմութիւնը , իւր հնութիւնը , իւր երկիրը :

Ահա հարցում՝ որոյ անկողմնակալ պատասխանը սկսք է զմեզ չինեցնէ : Պէտք է խոստովանիմք որ Հայը օտար ազգաց կը պ սրտի այսօր շատ մը լոյսեր իւր ազգութեան նկատմամբ , զոր ինքն իսկ պարտ էր նոցա ընծայել :

Մինչդեռ մեք մեր ազգային սքանչելի լեզուին ուսումը անհոգութեամբ գրեթէ բարձի թողի ըրած եմք , Եւրոպացիք հետամուտ են այնմ , և Բարիկ , Լոնտոն , Պէրլին՝ աշխարհի երեւելագոյն լեզուաց համահաւասար հասարակաց դասաւութեան պատիւ կընծայեն նմա :

Մինչդեռ մեք հնաւանդ սնապարծութեամբ Ադոմայ լեզուհամարելով զայն դոհ կը նստիմք , Պորբ , Փէթէրման , Մաքս Միւլէր , Պէօթիկէր , Վինտիչման և այլք՝ բաղդատական լեզուագիտութեան շնորհիւ անոր դասն ու բունը կը զննեն կորոշեն , և մեզ սեփական հետազօտութիւններն՝ իրենք կ'ստանձնեն անձանձիր :

Մեր Հայկաբանութիւնը ո՛քափ նուաստ վիճակի մէջ պիտի տեսնէինք եթէ մեր հետեւակ հայկաբանից տղայամիտ ստուգարանութիւններուն ո՛քան անհիմն լինելը նշմարէինք : Պիտի տեսնէինք ո՛քան լեզուական և պատմական տգիտութեան արդիւնքներ են անոնք : Եթէ հետամուտ եղած լինէինք յուսումն մեր ճիւզակից լեզուաց , ի՞նչ նոր խորհրդաւոր մի աշխարհ պիտի բացուէր մեր առջև , երբ տեսնէինք սոյն լեզուաց մէջ մեր լեզուին կազմութեան և բառերուն ածանցման և բարդութեան դազտնիքը :

Տակաւին Ասպառածը՝ աստ էած ստուգաբանելը , Նետուութէ՝ նու եհաս որդ , Աբոմանը՝ Արամայ ազգող , Երեւանը՝ Երևեցան լերինք , Սեւանը՝ ու վանք , առեւծը՝ առ և հիւծ , Էտովէլը՝ կապող , —ո՞ր մէկն յիշեմ , — արգահատելի՝ չըսեմ ծիծաղելի՝ տգիտութեան արդիւնք պիտի երեկի յաչս արեւելագէտ լեզուարանից . տգիտութիւն՝ գուցէ ներելի անցեալ ժամանակներու համար , բայց ոչ և ներկայիս , յորում բաղդատական լեզուագիտութիւնը այնքան հզօր քայլեր առած է , և մեր պա՛րտքն է օգուտ քաղել գոնէ օտարաց ըրած հետազօտութիւններէն

և անտարակուսելի կերպով հաստատուած գիւտերէն ու գիտութենէն :

Ազգային պատմոթեան գալով, յիրաւի պարտիմք երախտագիտութիւն յափուենական առ պատմահայրն մեր Մեծն և բաղմահմուտ Խորենացի, որ մեր քառասուն դարուց փառաւոր պատմութիւնը եթէ ոչ զրեց՝ զէթ զեղեցիկ կերպով ամփոփեց յերիս գիրս, և Հայուն՝ պատմական ազգաց կարգն անցնելոյ մեծ երախտիքն ըրաւ : Դժբաղդարար հետադայ պատմիչը ուրիշ բան չըրին՝ բայց եթէ ընդ օրինակել զնա, կամ զարդէն համառօտն ամենահամառօտել : Արդարիւ Խորենեան ծերուեցն ճշմարտախօսութեանը վրայ ազգին ունեցած գատահութեանն ու համարմանը արդիւնքն էր այս : Սակայն թէպէտ Մովիսի ճշմարտասիրութիւնը անսահման, բայց իւր հմտութիւնը չէր կրնար նոյն պէս անսահման լինել : Թողլ որ իրը մարդ՝ իւր անկեղծութեանն հակառակ՝ կրնար սխալիլ . նոյն իսկ կարելի էր սալողիլ յայն պիսի սխալներ՝ որ իւր ժամանակի գաղտփարաց արդիւնք կըրնան համարուիլ : Կամաւորապէս պատմութիւնը այլափոխած չէ Խորենացին, զայս ամեն արդարասէր պէտք է խռատվանի, բայց քերթողական աւանդութեանց հետեւելով ինչպէս որ ինքն ու կըսէ, պատմական և ժամանակագրական սրբագրելի կէտեր թողած է, զորս արդի քննադատութիւնը պարտական է ՚ի լոյն հանել ՚ի սէր ճշմարտութեան . օրինակ իմն՝ Արեսոսի յԱրտաշեաչ Տիեզերակալէ սպաննուիլն, Տոռպ կամ Վան քաղաքի Շամիրամ կեղակարծ թագուհին շինուելու պատմութիւնը . Քրիստոէ դար մի առաջ և երկու դար յետոյ Հայովիտեան Հայաստանի մերսոյ իշխող կիսարշակունի թագաւորաց պատմութիւնն անյիշատակ թողուլը, Տակիտոսի և Ամենանոսի պէս մեծ անուն սրբամարտնից ճշդրտագիր պատմութեանց չմիաբանութիւնը, այլովք քըն հանդերձ, զորս ոչ հարկ համարիմ մի առ մի յիշատակել աստանօր, յարմարագոյն ժամանակի թողով զայն :

Եղն գունակի հետազոտութեանց մէջ ևս գլխաւորապէս օդակար եղեն մեզ Եւրոպացի հնախօսք : Շիւլցի, Ռաօլինարինի, Զինքսի և Մօրտմանայ՝ Հայ սեպածեներու վրայ րրած անխոնչ խռագարկութեամբ՝ ոչ միայն Տոռպ կամ Վան հոյակառ քաղաքին շինութիւնը Հայկազն թագաւորաց յալթական ձեւաց գործ

լինելն ստուգուեցաւ ընդդէմ աւանդական բանից խորենացւոյն, այլ նոյն իսկ Հայ թագաւորական փառահեղ հարստութիւն մը դարուց փողոյն մէջէն յանկարծ ՚ի վեր երևեցաւ ՚ի հիացումն Հայութեան, որ իւր բնիկ պանծալի քաղաքին արձանագրութեանց աւանդապահ հսկայակերտ ամբարտակաց ոտքը կը նիրէ էն 25 դարէ ՚ի վեր՝ առանց իւր սեփական փառաց վրայ գաղափար անգամ ունենալու, և այսօր չնորհիւ օտարին Հայ պատմութեան փառաւոր էջեր կ'աւելնան, անծանօթ մնացած հայերէն անուններ թագաւորաց իշխանաց և քաղաքաց յանկարծ ՚ի լոյս կելլեն բազմազարեան խաւարին մէջէն : Պատմութիւն, զիցարանութիւն, աշխարհագրութիւն, լեզու, անկարծելի գիւտեր կը նեն, և նորօրինակ կը ճոխանան, ոչ եթէ Հայոց՝ այլ բա՛րէ Նւրոպացւոց ձեռքով :

Մօրաթման մը իւր մոգախառն բարբառով այսօր մեզ կը սովորեցունէ՝ Մարիքասայ և Խորենացւոյն հակառակ՝ ոչ միայն թէ այն արձանագրութիւնք Շամիրամայ դործը չեն, նորա Հայոց վերայ կեղծ յաղթութեանց պատմութիւնքը չեն, այլ ընդհակառակն՝ Հայ թագաւորաց ձեռագիրն են, Հայոց յաղթանակաց փառաշատ յիշառակարանք, որ քսան և հինգ դարուց վոթորիկաց հետ մրցեցան՝ Հայուն քաջութեան վրէժխնդիր արձանանալով :

Բայց ոչ զայսափ ինչ միայն պարտական եմք Շուլցի, Հինքսի և Մօրաթմանայ. այն բազմերախսու օտարներէն սովորեցանք թէ Մեսրովպեան դարէն բազում ժամանակաւ առաջ Հայն ունէր իւր բնիկ ազդային այրութենք, ապա ուրեմն և մատենագրութիւնը : Այո՛, այն անխոնջ հնագէտք, զՀայն ազատեցին այն ախուր կեղտէն զոր տոհմային պատմութիւնն իրեն ճակատը կը դրօշմէր, անգիր անգրական բարբարոս ազգաց մէջ դասելով զնա մինչև ՚ի Դ. դար, այսինքն քառասուն և հինգ դարուց երկայն ժամանակաց մէջ :

Բայց և հետագայ դարուց մեր պատմաց վրայ հմտական լուսաբանութիւնքն և ուղղութիւնքը պարտական եմք մեծումասար Տիւլօրիէ, Լանկուա, Պրօնէ, Բրուտոն՝ և այլ բազմահմուտ Գաղղիացւոց, որ Հայ պատմիներու քննութեան բո-

վէն անցընել ձեռնարկեցին մեծաւ աշխատութեամբ և անու-  
րանալի արդիւնքով :

Եթէ դառնամք Հայկական աշխարհագրութեան , դարձ-  
եալ կը գտնեմք Եւրոպացիներ , որ Հայոցմէ աւելի քիրտն և ջանք  
թափած են նաև մեր երկրին հին դիրքն և քաղաքները խու-  
զարկելոյ բազդատական գիտութեամբ հին աշխարհագրութեան :  
Աչն-Մարթէն և իւր հետևողք քիչ արդիւնք չունին այս մա-  
սին , որոց գլուխ պէտք է համարուի Ոփթթէր Գերմանացին ,  
ժամանակակից աշխարհագրաց իշխանը , որ հաղարիծեան մե-  
ծադիր լի և հոծ հմտութեամբ հատոր մը նուիրած է Հայոց  
աշխարհագրութեան , յարակից բազմաթիւ տեղացոյց տախ-  
տակներով : Քիչ ժամանակի մէջ երեք անգամ տպագրուած է  
այս գերազանց աշխարհագրութիւնը . Հայք սպառեցին իրենց  
երկրին վերայ ճառող սոյն ընտիր գործը : Աւա՛զ , ոչ , մինչդեռ  
հաղիւ թէ մի քանի Հայ ծանօթացած են անոր , հաղարաւոր  
Եւրոպացիք սերտած են մեր բնիկ աշխարհագրութիւնը շնոր-  
հիւ մեծանուն Ոփթթէրի :

Խոկ նոր ժամանակներու մեր աշխարհին մէջ ըրջող ճանա-  
պարհորդք՝ ինչպէս են Թուրքնը Փօր , Թավէրնիէ , Ցիւպուա տը  
Մօնքէրիէօ , Լանկլուա , Թէքսիէ , Պրօսէ , Մորիր , Քէր-Բօր-  
թըր , Էնսուըրթ , Պրէնթ , Թրէզըր , Պէհակէլ , Քօխ , Միւլապախ ,  
Բառօթ , Վակնէր , ևա , իւրեանց գիտնական գրութեամբքն և  
ուսումնական խուզարկութեամբք մեզ Հայոցն ճանապարհ բացած  
են , թէ ի՞նչպէս պէտք է լինին այժմու դարուս պահանջած ու-  
ղեգրութիւնք : Ո՞վ չտեսներ մեր ժամանակակից Հայ տեղագրաց  
և Եւրոպացւոց մէջ երևցած զանազանութիւնը . մերն ազօտ է և  
հարևանցի , վասն զի Հայ տեղագիրը չունի պաշար Եւրոպաց-  
ւոյն գիտութիւնն իւ մասին երկրաբանութեան , բուսաբանու-  
թեան , կենդանաբանութեան , տարրաբանութեան , հանքաբա-  
նութեան , բնադիտութեան , աշխարհագրագծութեան , տեսա-  
րանագծութեան և ընդհանուր սպառմութեան :

Ինծի պէս շատ Հայեր ճանապարհորդած են յԱնի , և համ-  
բարած մեր նախնեաց նուիրական նշխարները , ու հիտցած՝ նո-  
ցա պանծալի ձեռագործաց վերայ , որ , աւերակներովն հան-  
դէրձ աշխարհի զարմանքը կը չարժեն : Աակայն ոչ ոք Հայ՝ Ցիւ-

պուայի , Պրոսէի և Քէռթնէրի պէս ուսումնապէս նկարագրած է զայնա , և արձանագրութիւնքն ու պատկերները հաւաքած ու ներկայացուցած ոչ միայն ուսումնական Եւրոպիոյ՝ այլ նոյն խոկ Հայոց :

Խոկ աշխարհացոյց տախտակներու գալով , թէպէտ պարտիսք մեր երախտաղիտոթիւնը նուիրել Տատեան Յովհաննէս Պէյին , ազգային անմահ բարերարին , որ առաջին ընտիր Հայաստանի աշխարհացոյցը Փարփղեան գեղարուեստ փորագրութեամբ ազդին չնորհեց , սակայն , Տեա'րք , ժամանակը յառաջ քալեց , և Քիրէրթ Գիրմանացին այսօր իրաւամբ կրնայ պարծիլ թէ ինքն է Հայաստանի կատարելագոյն մեծաղիր աշխարհացուցի հեղինակը : Առ նաև առ Ամերիկացի միսիօնարոս պարտիսք դիմել եթէ կը փափաքիմք Հայաստանի ճշգրտաղիր մի նոր աշխարհացոյց յօրինել Հայերէն տառերով . դործ ամենասկարեռը , և որոյ ցարդ ուշանալը՝ ոչ սակաւ շիկնելց առիթ է մեզ , որ մեր բնագաւառին տակալին կատարեալ մէկ տեղացոյցը չունիմք : Թէ և օտարներէ շատ աւելի դիւրութիւններ ունիմք նաև այս մասին , ինչպէս որ զիտէք , որովհետեւ մեր Հայրենեաց մէջ կը բնակի ազգերնուս մեծամասութիւնը , առաջնորդք , վարդապետք , քահանացք , վարժապետք , վերջապէս ամեն միջոցք կան մեր երկրին որավառութիւնն և քաղաքաց և գիւղօրէից գիրքն ու թիւը ճշգրտելոյ : Սակայն մեք ոչ միայն զայս , այլև ոչ խոկ մեր ազդին աշխարհամարն ունիմք կատարեալ , թէ և Սահմանագրութիւնը տասնեւօժն տարիէ ՚ի վեր պարտաւորած է զմեզ ՚ի նոյն ձեռնարկել :

Ո՞վ զմեզ հարստացուցած է մեր նախնեաց դրամագիտական պատմութեամբը , դարձեալ Եւրոպացին Լանկուա , Կիլիկիոյ և Կիլիկեցւոց պատմութեան լրւսատուն , որ բազում աշխատութեամբ մեր Հայ թագաւորաց դրամները հաւաքած է և լուսաբանած հմտալից երկասիրութեամբ :

Այս , Տեա'րք , այս և վերցիշեալ ճիւղերուն մէջ Եւրոպացի հեղինակը զերծ չեն ՚ի կանխակալ կարծեաց , ՚ի սխալանաց և ՚ի թիւը ենթագրութեանց մեր ազդին պատմութեան , լեզուին և հնագրութեան նկատմամբ : Սակայն երբ ՚ի նկատի առնուի նոցա օտարալեզու , օտարաշխարհ և նորժամանակեայ լինելու ,

որով դժուարին եղած է հեռաբնակ և վաղեմի ազգի մեր լեզուն , բնութիւնը և սպիրութիւնքը ըմբռնել և թափանցել կատարելապէս , տարակոյս չկայ որ ներելի են նոցա թերութիւնները՝ որ ապաքն նուազ են համեմատաբար քան թէ ունեցած արդիւնքնին :

Այլ ա'զէ , ո՞վ պարտական է օտարաց սխալներն ուղղել , և նոցա թերին լրացունել ՚ի մասին Հայագիտութեան , այսինքն յայնմ ամենայնի որ Հայութեան կը վերաբերի , բայց թէ՛ նոյն ինքն Հայն :

Ապաքն ուրախ պէտք է լինիմք տեսնելով որ Չամշեան Հ . Մերայէլի մը , Խնճիճեան Հ . Կուկասի մը հետևող Հայ պատմադէտք և հնախօսք այսօր թէ՛ Թուրքիոյ և թէ՛ Ոռոփիոյ Հայոց մէջ կը տքնին . սակայն նոցա աշխատութիւնքը դժբաղդաբար բաւական չեն . ինչո՞ւ , վասն զի անհատական հետազօտութիւնք են , քիչերու ծանօթ , և կարօտ տակաւին աշխատութեանց :

Նոյնը պարտիմք խոստովանիլ այժմու դարուս հայկաբանից աշխատութեանցն համար՝ որ տակաւին չկարացին այս բազմարդիւն ասպարէզին մէջ՝ պէտք եղած պտռւղներն ընծայել :

Այս առանձնական ջանից և խուզարկութեանց մղում մը , հիմնագիծ մը , ուղղութիւն մը պէտք է , Տեա՛րք : Ա՛լ ժամանակն է որ Հայը սթափի իւր անհողութենէն , և ձեռք զարնու ապգովիմք իւր լեզուին , պատմութեանն ու հնութեանը ուշի ուշով քննութիւնն կատարելոյ : Ժամանակին ամենածախ ժամանքը՝ մեր ազնուագոյն հնութիւններն ու յիշառակարանները եղծած է և ՚ի չիք դարձուցած . հարկ է պատերազմիլ նորա հետ , և կորզել իւր ճիրաններէն դէմ այնքան որչափ ինչ կարելի է Ե . հնարաւոր :

Տեր փառաչէն մայրաբաղաքներն այսօր հիմն ՚ի վեր տոսպաւած , դարուց փուլոյն ներքե կը ծածկին : Պէտք են Հայ Պօթթաններ , Աէյարտներ , Շլիմաններ , որ Տրոյիոյ և Նինուէի նախանձորդ Հայ մայրաբաղաքաց հրաշակերտներն ՚ի խորոց երկրի ՚ի լոյս հանեն , ՚ի պարծանո գօրութեան , զիտութեան , արուեստից և ճարտարութեան Նախնետոցն մերոց :

Հայոց պատմութիւնը տակաւին դարուած արժանի կերպով իմաստասիրուած չէ . մեր ժամանակագրութիւնը թերութիւն-

ներ ունի՝ զորս հա՛րկէ ուղղել և հաշտեցունել Ընդհանուր Պատմութեան հետ . Նախապաշարումներ կան՝ զորս հա՛րկէ ողջամիտ և անկեղծ քննադատութեան բովէն անցնել . կցիցուր դէմքեր կան՝ որց ոյօդակապը պէտք է գտանել : Ազգին հին կեանքը հասկացուած չէ' . Նախնեաց գիտութիւնն , արուեստը , գեղարուեստը և վաճառականական պատմութիւնը՝ դեռ ևս ու ուժական հետազօտութեանց առարկայ եղած չեն : Հայաստանի բնախօսութիւնը՝ Հայ երկրաբանից ու բնապատմից կապասէ որ իւր արգաւանդ ծոցը բանայ , և իւր ընդերաց մէջի դաշտնի ճոխութիւնքը պարզէ յաչս աշխարհի , յօդուտ Հայոն և Պետութեան :

Ի՞նչ ըսեմ Հայկակեան լեզուին համար , այն անբար դանձուն համար կըսեմ , որ օտարաց իսկ զարմանք և նախանձ կը պատճառէ : Դեռ ևս այս ամենաճօխ լեզուին կմախքն է որ կը ճանաչուի . քերականութիւն , բառգիրք՝ ամենայն ինչ նախական միմակի մէջ են . լեզուին բուն ողին՝ տակաւին իւր բազմագարեան քօղը մերկացած չէ' :

Ահա զայս ամենայն սերտել , իմաստափրել , 'ի գոյ ածել և կերպարանել ձեզ յանձն կը լինի , Ուսումնապերճ Տեարք : Արդէն իսկ իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ Հայագիտութեան այլ և այլ ճիւղերուն մէջ ձեր տուանձին հետազօտութիւնքն , աշխատութիւնքն և հմտութիւնն ունիք , որ այնքան առաւել նշանաւոր և բեղմնաւոր պիտի լինին , որքան առաւել միութեամբ դիմէք առ ընդհանուր նպատակն . եթէ « Մէսանէնը պըրունէն է » ինչպէս Եւրոպացին կըսէ փորձով , ևս առաւել այն զօրութիւնը կարևոր է այսպիսի ընդարձակ խորհուրդ մի , այսպիսի յոքնավաստակ դիտաւորութիւն մի յիրականութիւն փոխարկելոյ համար :

Տեարք , ընկերութիւնս Ազգ . Մատենադարանի , ըստ նպատակին որ կը տեսնուի յիւրումն կանոնադրութեան , — վաւերացելոյ յՈւսումնական խորհրդոյ Ազգ . Կեդր . վարչութեան , Զ մարտի 1877 տարւոյս — , կը հրաւիրէ զձեզ այսօր 'ի ձեռն Հիմնադիր Վարչական ժողովոյ իւրոյ՝ որ բուռն հարկանէք Հայութեան անցեալն ու ներկայն առնուլ ձեզ 'ի կէտ նպատակին , ընկերական խորհրդակցութեամբ և աշխատակցութեամբ :

Հիմնադիր ժողովն՝ ըստ իւրումն արտօնութեան՝ կը համարձակի հիմնել այսօր ՀՈՅԿԱԶԵԱՆ ԿԱՇԱՌԻ, այսինքն՝ Հայ ուստիմականաց այն ժողովը որ իւր տքնութիւնները պիտի նուիրէ յօդուա, 'ի յառաջադիմութիւն և 'ի փառա Հայ ազգայնութեան : Ես Հայ սրտեր վնասուեց, յորս խանդ սղգաօիրական կը բորբոքի . Հայ հանձարներ որնեց, յորս անդրադարձ կը ցորայ նախնի հանձարներու կենսաւէտ զօրութիւն և արգաւանդ բեղմնաւորութիւն : — 'ի պատիւ Ազգիս համարձակաբար կը սեմք . մայրաքաղաքն՝ ո՞չ բոլոր Հայութեան հանձարները կը պարփակէ, և ո՞չ հրաւիրեալքը աստանօր՝ Հայ հանձարու բովանդակ ներկայացուցիչն ինելց սնափառութիւնը կը աածէք, Տեա՛րք : Տակաւին շատեր կան արժանաւորք աթուակից ձեզ բազմելց, և զորս պիտի բազգ ունենամք ընդ փոյթ այս ազդանուէր յարկաց ներքեւ տեսանելց, որ ձեզ հետ պիտի մըրցին 'ի բարգաւաճանս Հայագիտութեան :

Հիմնադիր ժողով՝ թէ և կը փափաքէր, բայց ըստ իւրոյ Հիմնադրին (յօդ, 3) չէր բաւական բոլոր Հայ ուստիմականաց հրաւէր տալ յասպարէդ : Եորա իրաւունքը կը պարունակուէր Հայկազեան կաճառը կազմելց չափ հարկ դատուած հանձարներն և եթէ հրաւիրել 'ի դործ . այսուհետեւ կաճառին կը մնայ արտաքոյ մնացած արժանաւոր ուստիմականներն և խորհուղ գլուխներն որոշել և հաւաքել, և Հայկազեան կաճառին այսօրեայ խումբը վազ 'ի ժողով մի մեծ կերպարաննել :

Տեա՛րք, այսօր պատիւ ունիմ յանուն՝ ընկերութեան և վարչական հիմնադիր ժողովոյ հռչակել առաջի ազգին թէ ՀՈՅԿԱԶԵԱՆ ԿԱՇԱՌԻ իւր գոյութիւնն առածէ և կազմուած օրինաւորապէս: Խմ կենաց ամենէննշանաւոր օրերէն մին կը համարիմ դայս, յորում կը ընորհուի ինձ աւետել ազգին թէ այսօր Ակրոյ և Միութեան վարդակարմիր արշալոյսն իւր կենսաճաճանչ ճառագայթները կ'սփոէ Հայութեան հորիզոնին վերայ :

Բ.

Տեա՛րք, ներեցէք որ երկու խօսք ալ ըսեմ թէ ի՞նչ է կաւառը, ո՞ւր պիտի գործէ և ի՞նչ պիտի գործէ իւր ընթացից մէջ: Հայկազեան կաճառը ներկայ ժամանակիս Հայ գրադիտաց,

ուսումնականաց, գեղարուեստագիտաց և ճարտարաց ժողովը է 'ի մայրաքաղաքիս : Նա իրեն անդամակից և աշխատակից կառնու և զամենայն Հայ որ վերոգրեալ հանդամանքներն ու նին, բայց կեղրոնէն հեռի գանուելով՝ կը լինին կաճառին Թուշ-նակէ անդամները :

Օտարաց անդամ բաց է Հայկազեան կաճառը : Այն գրադէտք՝ որ Հայութեան նուիրած են իւրեանց հայեացքն և հետադօտութիւնները՝ Հայութեան մաս կը համարուին, ուստի և սիրով կողջագուրուին 'ի կաճառէն իրը Պատրուայ անդամներ :

Հայկազեան կաճառը՝ ազգին բարձրագոյն հանճարներն իւր մէջը պարունակելովն հանդերձ, սիրով կանդամակցէ նաև այն պարկեշտ բանասէրները՝ որոց բոլոր փառափիրութիւնը Հայութեան օդտակար անդամ լինելոյն մէջ կը կայանայ :

Առանց Ակադեմիայի կամ Ճեմարանի մը բարձրահնչիւն առանն և ազգեցութեանը թեկն ածելոյ՝ Հայկազեան կաճառը իւր համեստ անուանն և նպատակին մէջ ևս կը հաւատայ թէ օդտարեր ծառայութիւններ պիտի կարենայ մատուցանել Հայրենի դպրութեան, և իւրօպանն օդնել նորա պայծառութեանն և յառաջադիմութեանը :

Կաճառը՝ Հայկական ասպարիդին յառաջապահ լեզէոնն է : Նորա սպայակոյտը պիտի լինի Հայկազեան ճեմարանը, որ այնքան կարեոր է ազգային գրականութեան : Այս անհրաժեշտ պէտքը՝ որ օր ըստ օրէ առաւել ևս զգալի կը լինի, օր մը պիտի բաղդ ունենամք տեսանելոյ յիրականութիւն դարձած, շընորհիւ ժամանակին : Կաճառը՝ մեծ գործ մը կատարած պիտի համարուի եթէ յաջողի ոգիները պատրաստել, հանճարները արտափայլեցնել որ բուռն հարկանեն վերջապէս այս հոյակապ հաստատութիւնն հիմնելոյ 'ի փառ և 'ի բարդաւաճումն Հայ մատենագրութեան :

Ազգային Մատենադարանը՝ իւր թերը մեծատարած կը բանայ Հայկազեան կաճառին, և կը չնորհէ նմա իւր անդորրաւէտ հովանին : Այս գահլիճը՝ փառաւո՞ր յոյժքան զլահիճս քաղաքագիտականաց, Հայկական կաճառին աչաց առջեւ կը ներկայացունէ զփառաշատ նախնիս նորա, որ ոչ միայն իւրեանց երկարութեամբքն մերծ են աստանօր, այլ ներկայ են

և հոգւով, և կը հօկեն իրենանց արժանաւոր յաջորդաց դործոցն և ազգանուէր աշխատութեանցը վերայ: Այն Նախնիք՝ որ ամենուս ալ հարդն են և փառք, հոս այս ոգեպարար յարկացն ներքեւ պիտի ներշնչեն Հայկազեան Կտոճառին անդամոց սիրոց զաէր հայրենեաց, որ յաղթողն է ամենայն անձնական վիճից, կարծեաց և մասնափութեանց: Այս նուիրական դըռներէն գուրում անդամք Կաճառին պիտի մերկանան զնախապաշարումն, զկուսակցութիւն և զանձնականութեան ողի: Աստանօր պիտի փառաւորի Հայ անոնք, և պիտի թագաւորէ եղբայրութիւնը: Ամենայն Կաճառորդի ունկը պիտի հնչէ մշտամըռունչ մեղրածորանն Եղիշէի օքսնչելի առածըթի: «Միասնէնն է ճայր բարեաց, անմիանիւան ննոց լարեաց»: Ազգային Մատենադարանը՝ չեղը երկիր մի է Հայոց համար, Աիրոյ Հայաստանն է նու, և ասպարէզ վաեմ եղբայրութեան: Ով որ Հայու սիրու կը կրէ՝ անդամ է ընկերութեան, և ով որ Հայ հանճարոյ փայլ և ճաճանչ կը ցոլացնէ՝ ի ճակատուն, նախաստահմանեալ է նու յանդամակցութիւն Կաճառի:

Մատենադարանի ընկերութեան կրօնը՝ Միութեան և Աիրոյ Աստուծոյն կրօնն է, Անոր՝ որ ըստ «Ամենաքիչն դաստիքական է»:

Մատենադարանի ընկերութեան քաղաքականութիւնն է ամենապարզ մի բառ, «Հայութաբարենիվան»:

Այն ամենայն խորհուրդը՝ որ սյս կրօնի և քաղաքականութեան համաձայն չեն, Մատենադարանիս մէջ արձատանք չունին: Ուստի և վտարեալ են ամենայն նկատմանք, դիտաւորութիւնը, առաջարկութիւնը կրօնականը և քաղաքականը: Քրիստոս է մեր առաջնորդը, և Օսմանեան գահուն Տէրը՝ մեր պահապանն ու խնամակալը:

Հոս, այս խաղաղութեան ավանց մէջ դործ չունի ով որ համազուած չէ թէ Աստուծած Աէր է և կը պահանջէ որ «Զիաւերն՝ հայսեր պաճէ, և զԱսուածոյն՝ Աստուծոյ»:

Եւ ի՞նչ սիրափորձէ Կաճառը:—Քանի որ կրօնական և քաղաքական խաղակիք իրաց վտարեալ են յատենչ ժողովցու: Կաճառը իւր բնլոր դարձունէ ութիւնը պիտի դարձնէ՝ ի քննութիւն և ի թարթափումն Հայկական լեզուի, սրամաթեան, հրնու-

թեան, արուեստիցն և գեղարվեստից : Արդէն քիչ մ'առաջ համառօտիւ իմն ծրագրեցի, Տեարք, թէ ինչե՛ր կան մեղ ընելիք, Ապարէն լայն և ընդարձակ առաջի կայ մեղ ասպարէդ, բազում աշխատութեանց և ջանփց են պէտք :

Մեք կ'սկսիմք այսօր, բայց 'ի գլուխ չափողի կարենամք հանել մեր ծրագիրը, մեր յաջորդները՝ 'ի նոյն պիտի շարունակեն: Մեզ մեծ փառք պիտի համարուի՛ եթէ կարող լինիմք պատրաստել նոցաճանապարհը, և դիւրել նոցա ապագայ դիւտերը:

Չպիտի կարենամք 'ի գլուխ հանել ըստ, ոչ առ յուստհատութեան, քա՛ւ լիցի, այլ վասն զի մեր սակաւօրեայ և զբաղվոց կեանքը չէ կարող պարունակել զիարձն վոյն՝ բայց բազմիմաստ նպատակ կահարին, որ է՛ ներառչողել և 'է լսու հանել զամենայն որ ինչ հայունեան կը վերաբերէ, յանցելուն և 'է ներկային :

Այս', ոչ առ յուստհատութեան, վասն զի ես համոզեալ եմ թէ Մատենադարանիս ընկերութիւնը աւելի բաղդաւոր պիտի լինի քան զբազմաթիւ վազամեռի ընկերութիւնս ազգիս . նա կ'սկսի համեստ կերպով, բայց նախասահմանեալ է 'ի մշտառաւութիւն: Քանի որ Հայու մը սիրու կը բարախի՛ Մատենադարանս պիտի գտնէ իւր զօրավիրոն ու օքնականը :

Եւ ո՞վ պիտի համարձակի այսպիսի բարենպատակ ձեռնարկութեան մը սատան կանգնիլ և խափանարար . Ամեն Հայ պէտք է իւր բաժինը բերէ ասոր շինութեանը, ամեն Հայուն պարտքն է հսկել օգնել և փափաքիլ սորա մշտակայ պայծառութեանը:

Ազգային Մատենադարանը՝ դանձորան է Հայութեան, և կոթող փառաց և կենաց նորա :

Ձեմ կրնար հոս չյիշել, Տեարք, Ասեահնի պայծառափայլ վանուց յիշառակարանաց մէջ հետեւեալ որոտառոչ տողերը, որ գրուած են 'ի թուին ԶՅ, (1259), այսինքն 618 տարի մենէ առաջ. «Կամուն Աստուծոյ Ես Միմիթարս միարանեցայ յուսով (Վանայ) Ա. Աստուծածածնիս, և եսու զիմ զբամազին այդին որ 'ի թերդիկ՝ ի հրապառուն, 'ի բաւութիւն հոգւոյ իմոյ : Որդ՝ ով իմ այդին հանէ ի գրաստոնէս, որուշեցի է կառաց որդուոյն Աստուծոյ:»

Այս', մեր ուսումնասեր նախնեաց հաւաան էր թէ «որոշեցի 'ի փառաց Որդւոյն Աստուծոյ » ով որ գրատան մը, մա-

նաւանդ Ազգային գրատան՝ և անոր օժանդակ ընկերութեան վաս կը հասցնէ :

Այնպիսին՝ կը մեղանչէ ընդդէմ անցելցյն, թշնամի՛ է ներկային, և յանցապա՛րտ առաջի ապագային : Յառաջադիմութեան դէմ նա ոճրագո՛րծ է, հանճարոյ մարդասպա՛նը, սրտիդաւաճա՛նը, մտքի Կայէ՛նը :

Մինչդեռ՝ ով որ մատենադարանի օգնող է և ընծայաբեր, վերոյիշեալ ուսումնասէր Մխիթարայ պէս պէտք է լի լինի յուսով որ իւր « հոգւոյ քաւութիւնը » կը գործէ, մարդկութեան բարեկամն է նա, և ազգին յափառենակա՛ն երախտաւորը :

Մատենադարանի ընկերութիւնը չունի այն սպատճառները որ ընկերութեանց յարատեելոյն խոչընդուն կը լինին : Նա դրամագլուխ չպահանջեր . իւր դրամագլուխը՝ ազգն է . իւր հարստութիւնը՝ կամաւոր նուէրներէ կը գոյանայ : Ահա քիչ ժամանակի մէջ հազար հատորէն աւելի նուէրներով օժառած է . ասկէ շատ աւելին վաղ ընդ փոյթ կը յուսայ ընդունել, իրեն եղած խոսումանց և ունեցած բանակցութեանց արդիւնքին յաջողութեան վրայ վստահ լինելով :

Արդէն Արմաշու Ա. Ռեմարին Գեր . Վանահայր Տ. Խորէն Ա. Արեգեպիսկոպոսը ո՛չ միայն սիրով ընդունեցաւ կաճառի անդամակցութիւնը, այլ և իւր աշխատասէր Մխարանութեան տպարանէն 'ի լոյս ընծայուած պատուական դրեանքն փութացաւ նուիրել Մատենադարանիս, յառաջ քան զամենայն վանական ընկերութիւնն : Լի եմք յուսով որ սոյն գեղեցիկ օրինակին չափաի դանդաղին հետեւիլ ազգասիրաբար նաև Երուսաղէմայ, Վենետիկոյ և Վիէննայի պատուարժան և ազգօգուտ վանքերն, որք անշուշտ էլևել զմիմեամբք առնելով Հայ մամլոյն աղդանուէր արդասիքը Մատենադարանիս ձեռքով պիտի փութան Ազգին ընծայելու :

Առանձնականք ևս չյետնեցան յօժանդակութիւն Մատենադարանիս : 'Ի մասնաւորի այսօր պարտք կը համարիմք յիշատակել նախ՝ Ամենապատիւ Ա. Պատրիարքը, որ ոչ միայն իւր օրհնութեամբը և խրախուսական բանիւքը կը քաջալերէ գլեզ, այլ և հոգելոյս Թէոդորեան Սարգիս վարդապետին մատ-

եանքը չնորհեց Մատենադարանիս , որ իւր խորին չնորհակաւ լիքը կը նուիրէ առ նորուն Բարձր . Արքաղնութիւն :

Երկրորդ , Վահեմափայլ Օտեան Գրիգոր էֆէնտին , որ և ' հեռուստ միշտ մերձ է հո՞ն ուր սոր աչօք Ազգին կենսառիթ շարժում մի կը նկատէ , նուիրեց Մատենադարանիս իւր գրատան ազգային կարևոր ձեռագիրները , հիմն դնելով Մատենադարանիս գրչական հաւաքածոյին , որոյ զարդ են հինգ հարիւր տարուան հնութիւն ունեցող մագաղաթեայ Անտարան մի , զոր նուիրեց Մեծ . Եսայի էֆէնտի Անուխեան , և մագաղաթեայ ծաղկենկար բոլորպիր հին կտակարան մի , ) զոր նուիրեցին Մանուէլեան Մեծ . Վահան և Մկրտիչ էֆէնտիները :

Երրորդ , Մեծ . Անտոն պէջ Պալեան բազմաթիւ Հայերէն պիտանի գրեանք նուիրեց , ամենէն առատ նուիրատուն հանդիսանալով առ Մատենադարանո :

Չորրորդ , Մեծ . Ճանիկ էֆէնտի Արամեան նուիրեց զամենայն մատեանս զոր 'ի լրյու հանած է իւր տպարանը , այն՝ որ առաջին կը փայլի 'ի շարս նմանեաց , և ստուդիւ պարծանք է Հայ մամիլոյն ճարտարութեանը :

Հինգերորդ , Մեծ . Տէտէեան եղբարք , որ չնորհեցին Մատենադարանիս մասն մի 'ի պիտանի հրատարակութեանց իւրեանց , որոց վերայ կը հսկէ Մամուրեանի մը պէս հանճար մը , իւր առատարուխ և ճարտար գրչովը Տէտէեան տպարանին պարծանքն աւելցունելով :

Վեցերորդ , Պայպոյլ Հառուղի Ամերիկեան ընկերութիւնը , որ փութացաւ 'ի ձեռն Արժ . Տօթօր Պլիահ՝ Մատենադարանիս նուիրել բազմատեսակ մատեաններ :

Արդարութեան նուիրական պարք մի կը համարիմք կատարել Ընկերութեանս մասնաւոր չնորհակալիքը նուիրելով աստանօր նաև Վարչական ժողովյու երկու անդամներուն . նախ առ Մեծ . Բարսեղ էֆէնտի Հալածեան , որ գեղեցկաչէն գրանոց մի ընծայեց Մատենադարանիս , և սկզբանական ծախուց ևս նպաստեց առատաձեռնարար , ինչպէս որ իւր ընդարոյս սովորութիւնն է :

Երկրորդ , առ Մեծ . Յ. Արշակ էֆէնտին , որ մեծ հաստատամութեամբ և ազգասիրութեամբ Ընկերութեանս հիմնար-

կութեանք և բարդաւաճմանը աշխատակցեցաւ , ծրիաբար մատակարարելով Մատենադարանիս թղթեղէն պիտոյքը :

Ընկերութիւնս այսօր հանդիսապէս իւր երախտագիտութիւնը կը յայտնէ ոչ միայն սոցա , այլ և այն ամենայն բարեմիրաց որ փութացան ճոխացունել զՄատենադարանս յօժարափոյթ նուիրատուութեամբք , և որոց անուանքը պիտի հրատարակին վաղ ընդ փոյթ Հայկառըն Մատենադարան Հանդիսին մէջ:

Տարակոյս չունիմք որ քանի՛ առաւել ընկերութիւնս Ազգին ծանօթանայ , այնքան առաւել պիտի յորդեն ընծայք , և Մատենադարանս իւր ազգային կեդրոնական դիրքը պիտի ընդունի արժանապէս :

Ընկերութեանց չյառաջանալուն մեծ պատճառ մ'ալ , մեր ազգին աղքատիկ հանդամանաց նկատմանը ընկերակցաց վրայ դրուած ծանր երեցող բաժանորդագիրն հարկն է : Մատենադարանի Ընկերութիւնս կը յուսոյ որ այն կողմէն ևս ազգայնոց սիրալիիր ընդունելութեանդհանդիսակի , որովհետեւ իւր բաժանորդագիրն է տարին հականի դոյզն գումար մի , և այն ևս՝ չորս եռամսէից բաժնուած՝ ի դիւրութիւն ընկերակցաց :

Չորս հարիւր դահեկանի մի համեստ գումար վճարելով Հայ մի կարող է մշտնջենաւոր բաժանորդ գրուիլ Ազգային Մատենադարանի Ընկերութեան :

Զի՞նչ քան զայս զիւրութիւնք : Սակայն նոյն իսկ այս դիւրութեանց վրայ հիմնեալ է Ընկերութեանս յաջողութիւնը : Աակաւ խնդրել , սակաւ առնուլ , զամենայն ինչ կամաւոր ընել , ազգայնոց վեհանձնութեան վերայ ապաւինիլ . ահա յայսմ է Ընկերութեանս յաջողութեան և բարդաւաճանաց գաղտնիքը :

Իսկ կաճառս , Տեարք , կաճառս մեծ ապագայի մը նախասահմանեալ է . ուստի և պէտք է յարատեւ մնայ , և պիտի մնայ սա յարատեւ , ընդհանուր ազգին համակրութեամբն ու քաջալերութեամբը :

Արդէն ո՞ւշ մնացած է այսպիսի ուսումնական ժողովոյ մի կազմութիւնը : Ազգը մեծապէս պէտք ունի ասոր . ուստի և պէտք է ուրախութեամբ ողջունէ սորա հաստատութիւնը , և նախատաւոր լինի սորա յառաջադիմութեանը :

Կաճառը պիտի լինի Ազգին խորհութ ուղեղը . նորա բարդա-  
ւաճման յարդարիչ ձեռքը :

Եթէ Ազգին հաճարն են առաւելապէս արուեստք , վաճա-  
ռականութիւն և հողագործութիւն , պէտք է որ Կաճառս հե-  
տազօտէ մեր հայրենեաց հողոյն որպիսութիւնը , տնտեսութիւնն  
ու երկրագործութիւնը , հանքերուն տեսակը , նորա երկրաբա-  
նական և բռնարանական հանգամանքը : Առանց այս հետա-  
զօտութեանց երկրի մի յառաջացման վերայ յուսալ՝ կարելի չ:

Ո՞չ ապաքէն այս հետազօտութիւնք կատարուած չլինելուն  
համար է առաւելապէս որ այսօր Հայ մշակն , արուեստագէտ  
և վաճառական գրեթէ ձեռնունայէ կը վաստակին այնպիսի երկ-  
րի մի մէջ , որ շտեմարան է ճոխութեան , և որ կարող է մեր  
ազգին բարօրաւէտ և գեղանսեհ ապագայ մը շնորհել եթէ գիտ-  
նամք խուզարկել և ճանաչել նորա մինչև ցարդ ծածկեալ մնա-  
ցած գանձերը :

Կաճառը՝ իւր միջոցաց ներելուն համեմատ՝ մզումն պիտի  
տայ Հայ ուսումնականութեան . պիտի քաշէ զԱզգն զհետ հըս-  
կայագայլ ընթացից ուսմանց և դիտութեանց : Լեզուն պիտի  
ճոխացնէ նոր գաղափարաց յայտանից բառերով , և պիտի ցու-  
ցանէ յաշս աշխարհի թէ Հայերէն լեզուն կարող է և ընդունակ  
ամենայն գիտութեանց՝ նորահնար բառերն ստեղծել , և յունա-  
կան ծեքծեքանաց կարօտ չէ բնաւ , իբրև զայլս 'ի լեզուաց ու-  
սումնականն Եւրոպիոյ :

Զեր մէջէն լեզուագէտք և ուսումնագէտք այս գեղեցիկ պաշ-  
տօնը պիտի ստանձնեն , Տեարք , և մեր լեզուին հնութեանը  
վրայ նորութեան վայլը պիտի սիռեն :

Պատմաբանք՝ ազգիս ընդհանուր աշխարհի հետ ունեցած յա-  
րաբերութիւնքը պիտի խմաստասիրեն , և Հայ ազգին սկիզբը , գոր-  
ծը և նշանակութիւնը պիտի քննադատեն մարդկային սեռին մէջ :

Հայկաբանք՝ ազգային լեզուին ողւոյն թափանցելով՝ նորա  
բառգիրքն և քերականութիւնը պիտի կատարելագործեն , հոմա-  
նիշ բառից , ճոխ առմանց , բարդութեանց և ածանցմանց ըլ-  
նութիւնը ստուգեն , և օտար լեզուաց Հայ լեզուին վերայ աղ-  
դած տպաւրութիւնը , և սորա՝ իւր դրացի ազգաց վերայ  
սփուած ազգեցութիւնը պիտի ճշդեն և յայտնեն . միով բանիւ Հայ

լեզուին խակութիւնը պիտի ծանօթացնեն ազդին և աշխարհի :

Նոր լեզուին վերայ ևս պիտի դարձունեն ձեր Հայկաբանքն իւրեանց ուշը . պիտի ջանան Արմեներէնը գտագոյն ևս դործել, տրամաբանական ձև մի տալ նորա համաձայնութեանը , և քերականական լեզու մի ընել այն ճապաւկ բարբառը , որ այնքան առաւել կը գեղեցիանայ և կը զարդարուի, ո՛րքան առաւել իւր սկզբնական աղբիւրին մերձենայ : Հայկաբեան Կաճառը՝ ծաղիկըն արդի Հայ զրականութեան , արդի բարբառը՝ ռամկային անունէն պիտի բարձրացունէ ՚ի պատիւ լեզուի , և Արմեներէնը՝ Հայկագեան լեզուին արժանի դուստր , մանաւանդ թէ և նաև խանձորդ պիտի հանդիսացունէ :

Ձեր Հնագէտք՝ պիտի դարձունեն իւրեանց հայեացքը մեր Հայրենեաց հոյակաս հնութեանցը վերայ : Հայաստան , կըսէ Եւրոպացի երևելի ճանապարհորդ մի (Վակնէր) , թաղուն կը պահէ ճարտարապետութեան վաղեմի գանձեր , որը անցեալ ժամանակաց ամենէն հզօր և գեղեցիկ յիշատակարանաց կարգըն են : Շատ ժամանակ չէ որ Վան և Անի քաղաքաց անդին արձանադրութիւնք և հոյակաս աւերակները ճանապարհորդ հնախօսներուն քննութեամբ մեզի քիչ մը ծանօթեղան : Սակայն ցարդ չկայ այնպէս ճիշտ ստորագրութիւն մը , որ Հայ թագաւորաց այս նախնի մեծասպայծառ մայրաքաղաքաց մնացորդները մանրախոյդ և ճիշտ քննութեամբ մեզի ցուցանէ :

Հայ սեպագիրք՝ Հինքսի , Ռօպէրթի և մանաւանդ Հայասիրտ Մօրտթմանի բաղմամեայ աշխատութեամբն և մեծ հրմտութեամբն հանդերձ տակաւին Հայ հանճարներու կը կարօտին որ նոցա վերայ սփոռուած բաղմադարեան քողը պատառեն , և Հայոց պատմութեան նոր մէկ հատուածը անտարակուսելի կերպով աւանդեն Հայուն և պատմական աշխարհի :

Աւերաշատ Հայաստանի զանազան կողմանքն ինչպէս են Արմակիր , Արտաշատ , Տիգրանակերտ , Վան , Կմախք , Արծէկ , Բագարան , Աշտիշատ , Թիլ , Գառնի , Դուին , Մանազկերտ , Անի , Արտաշատ , Զէյթուն , այլովքն հանդերձ , Կաճառիս տքնութիւնքն ու տաժանմունքը լիովին պիտի վարձատրեն :

Գեղարուեստուագէտքն ձեր՝ Հայ ճարտարապետութեան , արձանագործութեան , նկարչութեան ոգին պիտի թափանցեն , մնա-

ցորդ նշխարաց վերայ նկատելով և ՚ի դուրս հանելով ստեղծական Հայ միտքը , որ Պալեաններու պէս , Այլազովովիներու պէս աշխարհածանօթ հանճարներով պիտի փառաւորի :

Երաժիշտք՝ մեր սեփական աղդային երաժշտութեան հիմունքը պիտի որոնեն , և անոր վերայ պիտի հիմնեն նոր — Կոյկական քնարին գեղօնքը , ՚ի մրցումն զայն հանելով Գողթան բամբուանց և փանդեռանց հետ , որ աւա՛ղ կը լոեն ՚ի բազում դարուց հետէ , յորմէ հետէ լուցին և փառք Հայկաղանց , նիւթ և բորբոք այն սրտայոյդ և ոգեվառ քնարաց նուագասէր մեր նախնեաց :

Այս աշխատութիւնք՝ որ արդէն ձեր առանձնակի աքնութեանց առարկայքն եղած են ցարդ , ընկերակցաց բերած լոյսերովն առաւել՝ ևս պիտի պայծառանան , և Մատենադարանի Հայկալովն Մարտնուրաբան հանդիսին միջոցաւ հրատարակութեան ելնելով , առաւել յոյժ պտղաբեր պիտի լինին համօրէն Հայաստանեաց : Կութթէմալէրկեան մեծահանճար գիւտը՝ հըրաշալիքներ պարզեց աշխարհի : Հայն ալ իւր բաժինը՝ ընդարձակ բաժինը՝ արժանի է անկէց ընդունելոյ :

Տեսա՛ըք , մտանք ահա Մատենադարանիս ասպնջական դրսներէն : Ցիշեցէ՛ք որ լուսանորոգն Գրիգորի տաճարին գաւիթն եմք , ամենայն Հայու պանծալի Զօրն երկնաևարած հովանեացը ներքեւ : Ո՛հ , սիրեմք հոս մնալ , սիրեմք մեր կեանքն աստանօր նուիրական դործել սիրով Ազգին , և աշխատութեամբք վասն նորա :

Լուսաւորութեան այս Թափորին վերայ՝ գոչեմք ամենքս ալ աղդասիրաբար . « Բարւո՞ք է մեղ աստ լինել » :

Մոռնամք աստանօր զայն ամենայն որ Հայութեան արժանի չէ . յիշեմք միայն ինչ որ Հայ մի պէտք է միշտ յիշէ . — իւր անկեւալ և աղիողորմ Հայրենիքը :

Հայրենիք՝ Հայէն կը պահանջէն սէր , միութիւն , աշխատութիւն , անճնուրացութիւն : Դո՛ւք , Հայկազեան կաճառին անդամք , Աղդին պատուականադոյն և լուսամիտ մասին պատգամաւորք , աղացուցէ՛ք գործայի թէ հշտաբէտ աղդամիւնէանը՝

շահ է : Այսուհետեւ զոհ շահուց , զոհ կարծեաց , զոհ անձնասիրութեան :

Հասարակութիւնն ազգային թող ձեր վերայ տեսնէ երիւասարդ Հայաստանի մանրանկար պատկերը : Տեսնէ ձեր վերայ , ո՞ դիտունք և ուսումնականք , թէ դիտութիւն և կը լուսաւութիւն՝ մարդոյ սիրտը կազնուացուցանեն , միտքը կը լուսաւուրեն , կիրքերը կամոքեն , և զփրտ՝ անտարբեր կընեն առ այն ամենայն որ անձնական և մասնական վիճուն խնդիրներ են , ճշմարդիտ շահը՝ ազգին շահուցը մէջ հաւատալով և որոնելով :

Եթէ և այն ճակատները՝ որոց վերայ լցոր իւր գրոշմը դըրաւ , ամպոտին կրւսակցութեանց մռայլ ստուերներէն , — եթէ և այն սրտերը՝ որ մի ողջախոհ բարոյականի տրոփիւններով կողեարին , անձուկ կողմնակցութեանց , խեթի , եղբայրատեցութեան մե դրօշակին ներքեւ վինուորին , ո՞վ պիտի լինի Միութեան և Աիրոյ դրօշակիրը՝ այս արտասուելի և ալէծուփ ազգին մէջ :

0՞ն , ազնուախոհ և քաջակիրթ Նայ երիտասարդք , այս Միութեան վառարանին մէջ , մեր բարեխսնամ Կառավարութեան քաջալեր ժպտանաց ներքեւ , նորա ամենէն հաւատարիմ Ազդին լուսաւորութեանն և յառաջադիմութեանը համար աշխատիմք մի ոգւով , մի սրտով , մի նպատակու :

Եեղմնաւոր խորհուրդ մը այսօր յդացանք , գիտնամք զայն ՚ի լցու հանել : Ա՛լ ժամանակն է որ լուն մեր մէջ , գոնէ մեր գիտնոց սրտին մէջ՝ յուղմունք պառակտիչ ոգւոյ : Մեզի արժանի չեն այն ամենայն վէճք և բանակոփեք՝ որ Ազգին և մեր թանկադին ժամերն ՚ի զուր կը վատնեն , և զփրտ՝ ի սրտէ կը հեռացունեն : Եերկայ դարուս ողւով ներշնչուիմք , նորա արժանի դրազմունքներու դիմեմք , և առ այն առաջնորդեմք դնայութիւն :

Դարձունեմիս աշուընիս ոչ միայն Եւրոպիոյ վերայ , այլ նոյն իսկ մեր բազդակից շրջակայ ազգաց ուսումնականացը վերայ : Արչափ յետնեալ պիտի գտանեմք ինքզինքնիս եթէ անաշառապէս պէս եւլանեմք ՚ի բազդատութիւն : Ողին միութեան միթէ միայն նոցա՞ մէջ սքանչելիքներ պիտի ներդործէ : Յատ իսկ ժամանակի

կորուսած եմք . ապագայն վտանգուած է , Տեա՛րք . չկորուսանեմք դայն իսպառսպուռ :

Եթէ . յաջողեցանք զերջապէս իրարու ձեռք կարկառել Հայութեան չէզոք երկրին , — զիտութեան և ուսման ասպարիզին մէջ , — շթուլնան մեր բազուկները , չվեհերին մեր սրտերը : Խարդաւանութեանց , թշնամութեանց վոթորիկները՝ անկըելի գտնեն մեր ճակատները , անյուսաբեկ մեր սրտերը , ամրակուռ և անդեղեկ՝ մեր լեզոնը :

Տեա՛րք , վեհ օր մի է այս Հայութեան համար : Մեծ է խորհուրդն զոր Հայկազեան կաճառը ՚ի ճակատն իւր կը տանի:

Եթէ ճանաչեմք մեր պարտքը , եթէ հաւատարիմ գտնուիմք մեր նշանաբանին , ապագայն պիտի ըսէ . « Հայկազեան կաճառին նաւակատեաց օրը՝ Հայաստանի լուսաւորութեան , միութեան , բարդաւանման և բարօրութեան դարագլուխն եղաւ » :

ԽՈՐԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՐ-ՊԷՅ





13052 - 13056

2013

ԳԻՒ 400 ՓՈՐԱՑ



